ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017
12-րդ դասարան
Տևողությունը 150 րոպե

Ա. Աշխատանք բնագրով:

Հունվար ամիսն էր: Վիմափոր տաճարի դռներից դուրս եկան սպիտակազգեստ դպիրները՝ անդաստանի քաղցրանվագ շարականը երգելով: Նրանց հետևում էին ուրարակիրները, սարկավագները, աբեղաների խումբը, վարդապետները և վերջապես բարձրաստիճան եպիսկոպոսները՝ շրջապատած վեհափառ հայրապետին: Նրա առջևից դեմառդեմ գնում էին երկու սարկավագներ՝ արծաթե բուրվառները ձեռքներին, որոնք շարունակ խնկարկում էին կաթողիկոսին: Սկսած աբեղաներից մինչև եպիսկոպոսները՝ ամենքն էլ հագել էին սև փիլոններ, որովհետև ոսկեթել շուրջառները և թանկագին սպասքները թաքցրել էին արդեն այրերի մեջ:

Այդ ժամանակ հագարացիները հասան վանքի պարիսպներին: Վանականների խումբը ջոկ կանգնել էր այնտեղ անպաշտպան, ինչպես անմեղ երեների մի խումբ՝ արյունռուշտ որսորդներով ու բարակներով շրջապատված: Ամեն մեկը աղոթում էր Աստծուն և մտքում ասում էր. «Կա՛մ վահանով, կա՛մ վահանին»: Վանականները զգում էին վերահաս վտանգի ահավորությունը:

1. Գրե՛ք՝ որտեղից է առաջացել **հունվար** ամսանունը և տվե՛ք ծագման մեկնաբանությունը: **(2 միավոր)**
2.Բացատրե՛ք **ուրարակիր** բառի **ուրար** արմատի նշանակությունը և նրա գործածությունը կրոնական աշխարհում: **(2 միավոր)**
3.Բացատրե՛ք **սարկավագ, եպիսկոպոս, աբեղա, վարդապետ** կրոնական աստիճանների իմաստները: **(2 միավոր)**
4.Գրե՛ք **դպիր, բուրվառ, խնկարկել, շուրջառ, փիլոն,երե, հագարացի** բառերի բացատրությունները: **(3 միավոր)**
5.Գրե՛ք **բարակ, այր, ջոկ** բառերի համանունական շարքերը և բացատրե՛ք իմասատները:Գրե՛ք **վերահաս** բառի հարանունը և նշե՛ք այդ բառերի իմաստները: **(2 միավոր)**
6.Նշե՛ք՝ որ լեզվից է ծագում **կաթողիկոս** բառը, և ինչ՞ է այն նշանակում: **(2 միավոր)**
7. Նշե՛ք՝ որտեղից է ծագում **«Կա՛մ վահանով ,կա՛մ վահանին»** արտահայտությունը, և երբ է այն կիրառվում: **(2 միավոր)**
8. Գրե՛ք **Աստված** բաղադրիչով կազմված առնվազն չորս հատուկ անուն: (1 միավոր)

Բ. Շարադրություն՝ «Սրտի թելադրանքով » վերնագրով (երկու էջի սահմաններում) : (5 միավոր)